Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ «_____» 2024թ. N---------Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ՏՈԿՈՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՓՈԽԱԴՐԱՎԱՐՁԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ի N 95 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը.

1) 1 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում բոլոր տրանսպորտային միջոցներով անսահմանափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **400** դրամ,
2) 7 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում 7 օր բոլոր տրանսպորտային միջոցներով անսահմանափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **2.000** դրամ,
3) 30 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում 30 օր բոլոր տրանսպորտային միջոցներով անսահամափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **5.500** դրամ.

4) 180 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 1 տարվա ընթացքում 180 օր բոլոր տրանսպորտային միջոցներով անսահմանափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **20.000** դրամ,
5) 365 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 365 օր բոլոր տրանսպորտային միջոցներով անսահամանափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **35.000** դրամ,
6) Կենսաթոշակառուները, 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի հաշմանդամները տրանսպորտային բոլոր միջոցներից օգտվում են անվճար՝ սույն ենթակետով նախատեսված համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթի ներկայացման դեպքում:

2. Սույն որոշման առաջին կետով նախատեսված ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի բացակայության դեպքում ուղևորը յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի 1 օգտագործման համար վճարում է 100 կամ 50(տրոլեյբուս) կանխիկ դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Երևան քաղաքի ավագանու «Մայր Հայաստան»
խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ՏՈԿՈՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՓՈԽԱԴՐԱՎԱՐՁԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ի N 95 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն նախագծով առաջարկվում է Երևան համայնքում սահմանել 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ մասում նախատեսված կարգավորումները և նպատակ ունենալով կարգավորել Երևան համայնքում ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձի հետ կապված հարաբերությունները: Սույն որոշումը նաև միտված է կարգավորելու միասնական տոմսային համակարգի ներդրման հարցերը:

Երևան քաղաքի լրջագույն հիմնախնդիրներից մեկը տարիներ շարունակ անհրաժեշտ լուծում չստացող տրանսպորտային համակարգի խնդիրն է: Երևան քաղաքի կանոնավոր զարգացման և բարեկեցության ապահովման մեջ մեծ դեր ունի տրանսպորտի արդյունավետ աշխատանքը: Արդյունավետություն նշանակում է տրանսպորտի աշխատանքի համապատասխանություն դրա կարգավորման հիմքում ընկած իրավական պահանջներին և համապատասխանություն համայնքի բնակիչների կարիքներին:

Որպես արդյունավետ տարբերակ անհրաժեշտ է ներդնել միասնական տոմսային համակարգ Երևան քաղաքի ամբողջ տրանսպորտային համակարգում՝ առանց բացառության, և տրանսպորտային բոլոր միջոցներից օգտվելու հնարավորությունը դարձնել մատչելի՝ հաշվի առնելով մեր քաղաքացիների միջին եկամուտները և միջին սպառողական զամբյուղի արժեքը: Երևան քաղաքի տրանսպորտային համակարգը պետք է ծառայի ի շահ մեր քաղաքացիների և դառնա իրականում արդյունավետ համակարգ՝ մեր քաղաքի բնակիչներին և հյուրերին ժամանակին և հարմարավետ անհրաժեշտ վայր հասցնելու համար: Տրանսպորտային համակարգը չի կարող դառնալ շահույթ կամ գերշահույթ հետապնդելու կամ ստանալու միջոց, քանի որ դրա արդյունքում տուժում է Երևան քաղաքի բնակիչը: Մատչելի, արժանապատիվ ու արդյունավետ տրանսպորտային համակարգի ներդնումը սոցիալական պետություն կառուցելու կարևորագույն բաղադրիչներից է:

Բազմաթիվ են միջազգային օրինակները տրանսպորտային համակարգը հարմարավետ և մատչելի դարձնելու մասով: Մասնավորապես պետք է համեմատության չափանիշ վերցնել հարևան Վրաստանի մայրաքաղաքում գործող համակարգը:

Առաջարկում ենք սահմանել միասնական տոմսային համակարգով տրասնպորտային համակարգ նոր սակագներով՝ օրեկան, շաբաթական, ամսեկան, 6-ամսյա և տարեկան կտրվածքով: Սակայն միասնական տոմսային համակարգից օգտվելը չպետք է լինի պարտադիր և տրանսպորտից օգտվողը ինքնուրույն կարող է որոշել՝ օգտվում է տոմսային համակարգից, թե մեկ ուղեվարձի համար վճարում է 100 կամ 50 (տրոլեյբուս) կանխիկ դրամ: Տրասնպորտային համակարգի մեր սույն բարեփոխումների առաջարկության տրամաբանությունից ելնելով՝ նախագծով առաջարկում ենք նաև Երևանի քաղաքում տրանսպորտային բոլոր միջոցներից օգտվելու հնարավորությունը դարձնել անվճար կենսաթոշակառուների և 1-ին, 2-րդ ու 3-րդ կարգի հաշմանդամների համար, ինչը արդեն բխում է Հայաստանի Հանրապետության սոցիալական պետություն լինելու հանգամանքից և «Մայր Հայաստան» դաշինքի նախընտրական խոստումից:

Հաշվի առնելով վերոշարադրյալը առաջարկում ենք Երևան քաղաքի տրանսպորտային համակարագի սակագների և արտոնությունների հետևյալ տարբերակը՝

1) 1 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 24 ժամվա ընթացքում բոլոր տրանսպորտային միջոցներով անսահմանափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **400** դրամ,
2) 7 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 30 օրվա ընթացքում 7 օր բոլոր տրանսպորտային միջոցներով անսահմանափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **2.000** դրամ,
3) 30 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 90 օրվա ընթացքում 30 օր բոլոր տրանսպորտային միջոցներով անսահամափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **5.500** դրամ.
4) 180 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 1 տարվա ընթացքում 180 օր բոլոր տրանսպորտային միջոցներով) անսահմանափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **20.000** դրամ,
5) 365 օրվա համար ֆիզիկական քարտ տոմս կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ֆիզիկական քարտ տոմսի կամ օնլայն հավելվածով էլեկտրոնային տոմսի ակտիվացման պահից 365 օր բոլոր տրանսպորտային միջոցներով անսահամանափակ ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ **35.000** դրամ.

6) Կենսաթոշակառուները, 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի հաշմանդամները տրանսպորտային բոլոր միջոցներից օգտվում են անվճար՝ սույն ենթակետով նախատեսված համապատասխան կարգավիճակը հաստատող փաստաթղթի ներկայացման դեպքում:

Սույն նախագծով առաջարկվում է նաև ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95 որոշումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 37-րդ հոդվածը:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 95 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ և ԵՐԵՎԱՆ ԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ՏՈԿՈՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՓՈԽԱԴՐԱՎԱՐՁԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ արդարադատության նախարարություն «01» հուլիսի 2024թ. N //25948-2024	**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** «Երևան քաղաքի ավագանու 2024թ.-ի մարտի 12-ի N 95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ. «Երևան քաղաքի ավագանու 2024թ-ի մարտի 12-ի N95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների	

		սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակում առարկություններ չունենք: Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ թե՛ նախագծի վերնագրում և թե՛ նախագծի բովանդակության մեջ Երևան քաղաքի ավագանու 2024 թ-ի մարտի 12-ի N95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ կարգավորումները անհրաժեշտ է սահմանել վերջնամասում:	Ընդունվել է ի գիտություն: Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N95 որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ կարգավորումները սահմանվել է նախագծի վերնագրի վերջնամասում հետևյալ կերպ՝ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ՏՈԿՈՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՓՈԽԱԴՐԱՎԱՐՁԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-ի N 95

			ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ: Հաջորդիվ՝ բովանդակության մեջ առաջին կետը շարադրվել է 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ 3. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95 որոշումը:

Երևան քաղաքի ավագանու

«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

N Ն/37086-24 «02» հուլիսի 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

Ի պատասխան Ձեր 03.06.2024թ. հ. 139-2024թ. գրության՝ «Երևան քաղաքի ավագանու 2024թ.-ի մարտի 12-ի N 95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի լրամշակված տարբերակի վերաբերյալ Ձեզ է տրամադրվում ՀՀ ԱՆ պետական փորձագիտական եզրակացությունը:

Առդիր՝ «1» նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

7/2/2024

X

ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN ARMINE 5405610046

Կատարող՝ Նվարդ Ղուկասյան
Կազմակերպական վարչություն
Հեռ.՝ 011-51-42-54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594-004
էլ. փոստ info@moj.am

N //25948-2024
«01» հուլիս 2024թ.

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Ավինյան,

Ի պատասխան Ձեր՝ 2024 թվականի հունիսի 11-ի թիվ 01/98459-24 գրության՝ կից ներկայացվում է «Երևան քաղաքի ավագանու 2024թ-ի մարտի 12-ի N95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ**

7/1/2024

X

ԼԵՎՈՆ ԲԱԼՅԱՆ

Signed by: BALYAN LEVON 2602780103

ԼԵՎՈՆ ԲԱԼՅԱՆ

**Կատարող՝ Աշոտ Հովհաննիսյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594-125**

ՊԵՏԱԿԱՆ ԿՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024Թ-Ի ՄԱՐՏԻ 12-Ի N95 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 100 ՏՈԿՈՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՓՈԽԱԴՐԱՎԱՐՁԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2024թ-ի մարտի 12-ի N95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակում առարկություններ չունենք:

Միաժամանակ հարկ ենք համարում նշել, որ թե՛ նախագծի վերնագրում և թե՛ նախագծի բովանդակության մեջ Երևան քաղաքի ավագանու 2024 թ-ի մարտի 12-ի N95 որոշումը ուժը կորցրած ճանաչելու վերաբրյալ կարգավորումները անհրաժեշտ է սահմանել վերջնամասում:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալություն